

Ֆ. ՆԻՑՇԵՆԻ ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Ս. Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

19-րդ դարը շրջադարձային պետք է համարել փիլիսոփայության պատմության մեջ: Մեր դարաշրջանի հայտնի մտածող Օսվալդ Շպենգլերի բնորոշմամբ «18-րդ դարի վերջին համակարգված փիլիսոփայությունն ավարտվեց»¹: Ֆրանսիացի փիլիսոփա Ռենե Դեկարտի առաջադրած և լուսավորականության մեջ խորապես հաստատագրված «բանականության գերակայության» և առաջընթացի սկզբունքների վրա կառուցված փիլիսոփայությունը Հեգելից հետո էապես վերափոխվեց:

19-րդ դարի երկրորդ կեսից սկիզբ առած փոփոխությունները դրսևորվեցին նաև պատմության փիլիսոփայության ասպարեզում: Հենց այս փուլում պատմափիլիսոփայությունը դարձավ աշխարհայացքի յուրահատուկ ձև, պատմության արժեքավորման մեթոդաբանություն: Եվ պատահական չէ, որ ուսու նշանավոր փիլիսոփա Նիկոլայ Բերդյաևը նշեց, թե «Պատմական ճանաչողությունը և պատմության փիլիսոփայությունը պետք է ունենան իրենց իմացաբանությունը և ճանաչողության տեսությունը»²: Պատմափիլիսոփայության զարգացման գործում զգալի դեր խաղաց 1789 թ. Ֆրանսիական հեղափոխությունը, և դեռևս հեղափոխության նախապատրաստման փուլում գերմանացի մտածողներն առանձնահատուկ ուշադրություն էին դարձնում պատմական գիտելիքներին, որոնց հիման վրա Գերմանիայում պատմական գիտակցությունը դարձավ կենսափիլիսոփայության բաղկացուցիչներից մեկը: Հերդերը, Հումբոլդտը և Հեգելը դարձան գերմանական պատմափիլիսոփայության հիմնադիրները՝ սկիզբ դնելով աշխարհն իբրև պատմություն ընկալելու խորիմաստ կոնցեպցիային: Ինչևէ, 19-րդ դարի սկզբներին պատմափիլիսոփայությունն արդեն գերմանական փիլիսոփայության առանցքային ոլորտներից մեկն էր և կառուցված էր ուղիղ շինարարի ու առաջընթացի սկզբունքների հիման վրա:

19-րդ դարի երկրորդ կեսից ի վեր թե գերմանական փիլիսոփայությունը, և թե գերմանական պատմափիլիսոփայությունը թեև կոսմոսի նոր փուլ: Ֆրիդրիխ Նիցշեն (1844—1900) այդ փուլի առավել ճանաչված ներկայացուցիչներից է: Բայց մեզանում Նիցշենն առավելապես հայտնի է իբրև իրացիոնալիստ, աթեիստ մտածող, աֆորիզմների հեղինակ, որի փիլիսոփայական ուսմունքի հիմնակետը նիհիլիզմն է: Արդյունքում Նիցշեի պատմափիլիսոփայական հայացքները համարվել են ոչ էական, և շատ աշխատություններում այդ մասին ընդհանրապես խոսք չկա: Մասնավորապես, 20-րդ դարի հայտնի փիլիսոփա Բերտրան Ռասելի «Արևմտյան փիլիսոփայության պատմություն» երկհատորյակում հեղինակը ընդհանրապես չի անդրադառնում

¹ О. Шпенглер, Закат Европы, М., 1993, т. 1, с. 181.

² Н. Бердяев, Смысл истории, М., 1990, с. 12.

Նիցշեի պատմափիլիսոփայությանը: Մեր դարաշրջանի մյուս խոշոր փիլիսոփաները ևս ոչ միայն ըստ էության չեն գնահատում Նիցշեի պատմափիլիսոփայությունը, այլև անտեսում են այն: Մինչդեռ Նիցշեն ժամանակի խոշորագույն գերմանացի պատմափիլիսոփաներից է և հեղինակել է «Կյանքի համար պատմության օգուտի և վնասի մասին» աշխատությունը:

Փիլիսոփայության պատմության մեթոդաբանական առանձնահատկություններից մեկն այն է, որ մասնակի ու նեղ հիմնախնդիրները (այդ թվում՝ պատմության փիլիսոփայական հիմնախնդիրները) մշտապես ածանցյալ են ընդհանուր, կոնցեպտուալ սկզբունքներից: Այս տեսակետից Նիցշեի պատմափիլիսոփայական հայացքները պետք է քննարկել նրա փիլիսոփայական հիմնակետերի համատեքստում:

Նիցշեի պատմափիլիսոփայական հայացքների հիմնական օւղղորդիչներից մեկը «Աստված մեռավ» հանրահայտ միտքն է, որն առաջին անգամ գերմանացի փիլիսոփան արտահայտել է «Ուրախ գիտություն» աշխատության երրորդ գրքում: Այդ միտքը պետք է մեկնաբանել ոչ թե ուղղակիորեն, այլ իբրև վերզգայական աշխարհի ճգնաժամ: Գերմանացի փիլիսոփա Մարտին Հայդեգերը իր «Նիցշեի խոսքերը՝ «Աստված մեռավ»» աշխատության մեջ նշում է. ««Աստված մեռավ» միտքը նշանակում է՝ վերզգայական աշխարհը զրկվեց գործունեությունից»³: Փաստորեն այս արտահայտությամբ Նիցշեն ազդարարում է նախկին փիլիսոփայության վախճանը, որը սկիզբ էր առնում Պլատոնից: Իսկ ժամանակակից փուլի հիմնական հատկանիշը Նիցշեն համարում է «նիհիլիզմը, որը Նոր ժամանակի ազդեցության տակ գտնւրվող ժողովուրդների համաշխարհային-սլատմական շարժումն է»: Այսպիսով, Նիցշեի փիլիսոփայական ուսմունքի առաջնային խնդիրներից մեկը արժեքների վերագնահատումն է, նոր սկզբունքների մշակումը: Իսկ վերագնահատման կարիք ունեցող արժեքներից ամենակարևորը մարդն է: «Նիցշեն ցանկանում էր մարդկային ընդունակությունների և նրա ուժի վերականգնում»⁴, նշում է 20-րդ դարի ֆրանսիացի մտածող Պոլ Ռիկյորը: Եվ Գերմարդու ուսմունքը, որը հետագայում դիտվեց իբրև հումանիզմի վախճան, մարդու վերագնահատման նիցշեյան ձգտման հետևանք էր: Արժեքների վերագնահատման գործընթացում Նիցշեն կարևորում է մարդկային գիտակցության խնդիրը: Եթե Գեկարտի փիլիսոփայության հիմնակետերից մեկը համընդհանուր կասկածն էր, և նրա համար մարդկային ինքնագիտակցությունը միակ հավաստի իրողությունն էր, ապա Նիցշեն կասկածի տակ է դնում նաև վերջինիս հավաստիությունը:

Երկրորդ հիմնարար դրույթը, որը կարևոր է Նիցշեի պատմափիլիսոփայությունն ուսումնասիրելու համար, վերաբերում է փիլիսոփայության դերին: Փիլիսոփայության նախկին փուլն ավարտվեց Հեգելի պանլոգիստական, հայեցողական համակարգով, ինչը, բնականաբար, հրատապ դարձրեց փիլիսոփայության սոցիալական ֆունկցիայի խնդիրը: Այս համատեքստում Նիցշեի համար էական է փիլիսոփայության անհրաժեշտության խնդիրը, նոր պայմաններում դրա վերափոխումը: Տեսական, հայեցողական և ռացիոնալիստական փիլիսոփայությունն անընդունելի է գերմանացի մտածողի համար: Նա բոլոր հիմնահարցերում նախապատվությունը տալիս է պրակտիկ, իռացիոնալ մեթոդներին և որ ամենակարևորն է՝ անհատականացված մտեցումներին: Եթե փիլիսոփայական նախկին համակարգերում հիմնականում առկա

³ М. Хайдеггер, Слова Ницше «Бог мертв». Вопросы философии, 1990, № 7, с. 147.

⁴ П. Рикер, Конфликт интерпретации, М., 1995, с. 234.

տակցութեան որոշակի վիճակ նկարագրելու նպատակով: Օրինակ, Հեգելի մոտ «արտապատմական» հասկացութիւնն ունի տարածական իմաստ և բընորոշ է այն ժողովուրդներին, որոնք դեր շունեն համաշխարհային Ոգու զարգացման գործընթացում: «Պատմականն ու արտապատմականը հավասարապես անհրաժեշտ են առանձին անհատի, ժողովրդի և մշակույթի առողջութեան համար»⁷, — ընդգծում է Նիցշեն: Ըստ էութեան, պետք է հասկանալ, որ եթե առանց պատմականի մարդը գոյութիւն չունի, ապա պատմականի չափից ավելի գերակայութեան պարագայում ևս մարդը դադարում է մարդ լինելուց: Պատմականի դերը մարդու կյանքում անժխտելի է, և Նիցշեն պատմական է համարում այն մարդկանց, որոնց մոտ անցյալի վերհիշումը ձգտում է առաջացնում դեպի ապագան: Գերմանացի փիլիսոփայի համար արտապատմական են այն մարդիկ, որոնք վճռորոշ դեր ունեն ամեն մի նորի ու հանճարեղի ստեղծման գործում, քանզի միայն ամեն ինչ մոռանալու, անցյալի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դեպքում անհատականութիւնը կարող է հասնել իր նպատակին: Այլ կերպ կարող ենք ասել, որ պատմականն ունի զուտ սոցիալական ու ավանդապաշտական նշանակութիւն, մինչդեռ արտապատմականը անհատականութեան դրսևորումն ու նորարարութեան պայմանն է: Նիցշեի պատմափիլիսոփայական հայացքների համաձայն, պատմական և արտապատմական կյանքով ապրող մարդկանցից զատ կան նաև «վերպատմական» մարդիկ, վերպատմական են այն մարդիկ, որոնք ունեն պատմութիւնը հարգելու և արտապատմականը հասկանալու ունակութիւն:

Պատմափիլիսոփայութեան առանցքային խնդիրներից մեկը պատմականութեան տեսակների հարցն է: Նման հարցի գոյութիւնը պայմանավորված է այն հանգամանքով, որ պատմափիլիսոփայութիւնը բազմակողմանիորեն է քննարկում պատմութիւնը, նրա դերը մարդու կյանքում: Նիցշեն տարբերակում է պատմութեան երեք տեսակ՝ մոնումենտալ, հնախույզ (անտիկվար) և քննադատական: Պատմութեան նման բաժանման հիմքում Նիցշեն դնում է ընկալման և սոցիալական գործառնութեան տարբեր տեսակներ: Մոնումենտալ պատմութեան շնորհիվ մարդիկ սովորում են հասկանալ նշանակալի իրադարձութիւնները, որոնք բախտորոշ ազդեցութիւն են ունեցել իրենց անցյալի ու ներկայի վրա: Ըստ Նիցշեի, մոնումենտալ պատմութիւնն իր մեջ վտանգ է պարունակում, քանի որ նշանակալի իրադարձութիւնները գրեթե միշտ չափազանցվում են: Արդյունքում, պատմութիւնը զրկվում է ռեալ հիմքից և ընկալվում միֆականացված ձևով: Գերմանացի փիլիսոփան այն տեսակետն է հայտնում, որ քանի դեռ անցյալը համարվում է ընդօրինակման նմուշ, պատմութիւնը կանգնած է խեղաթյուրման վտանգի առջև: Մոնումենտալ պատմութեան ֆետիշացման մյուս վտանգավոր հետևանքն այն է, որ դառնալով շարագործ առաջնորդների հավատամքը, պատերազմների, հեղափոխութիւնների տեղիք է տալիս: Եվ վերջապես, երրորդ վտանգը զարգացման խոչընդոտումն է: Մոնումենտալ պատմութեան ջատագովները հռչակելով «Տեսեք, նշանակալին արդեն գոյութիւն ունի», «Թող մեռածները թաղեն ողջերին» սկզբունքները, խոչընդոտում են զարգացմանը և նոր անհատականութիւնների ինքնահաստատմանը:

Հնախույզ ընկալման հիմքում ընկած են անցյալի պահպանումն ու երկրպագումը: Համեմատելով պատմական ընկալման այս երկու ձևերը՝ Նիցշեն ընդգծում է, որ ով անցյալի կարիք է զգում նորը ստեղծելու համար, նա դա կարող է անել մոնումենտալ պատմութեան միջոցով: Իսկ ով ուզում է մնալ անցյալի սահմաններում, նա հնախույզ պատմութեան կրող է: Մյուս

⁷ Նույն տեղում, էջ 178:

տարբերությունն այն է, որ մոնումենտալ պատմությունը կենտրոնանում է միայն անցյալի կարևոր իրադարձությունների վրա, մինչդեռ հնախույզ պատմական զգացումը շի տարբերակում առաջնայինն ու երկրորդայինը և ունի սահմանափակ մտահորիզոն: Բայց պատմական ընկալման այս երկու ձևերի միջև կա նաև նմանություն. երկու դեպքում էլ «պատմությունը խեղաթյուրվում է»: Նման խեղաթյուրման պատճառն այն է, որ պատմությունը կոչված է մշտապես ծառայելու կյանքին: Եվ, ըստ Նիցշեի, քանի դեռ պատմությունը կոչված է ծառայելու կյանքին ու ենթարկվելու կենսական բնազդների իշխանությանը, միշտ ֆետիշացվելու է: Ըստ էության, հնախույզ պատմությունը արխաիկ ֆունկցիա է կատարում, այսինքն՝ անցյալի լիակատար պահպանում և նորի բացառում: Հնախույզ պատմական զգացումը անցյալը հռչակում է իբրև սրբություն՝ անմահացնելով այն:

Եվ, վերջապես, անցյալի ուսումնասիրության երրորդ եղանակը քննադատականն է: Վերջինիս մասին խոսել է նաև Հեգելը, այն համարելով գերմանական պատմափիլիսոփայության հիմնական մեթոդը: Բայց եթե Հեգելի մոտ քննադատական պատմությունը ճշմարտությունը և հավաստիությունը բացահայտելու եղանակ է, ապա Նիցշեն այն դիտում է անցյալի գերությունից ձերբազատվելու լավագույն ճանապարհ: Նախորդ երկուսի նման այս ձևը ևս Նիցշեի պատմափիլիսոփայության մեջ ծառայում է կյանքին: Բայց եթե առաջին երկուսը գերազնահատելու հակում ունենին, ապա քննադատական պատմության գոյությունը բխում է անցյալը ժամանակ առ ժամանակ «ջարդելու» կենսական անհրաժեշտությունից, ինչը կարևոր է ապագան կառուցելու համար: Քննադատական պատմությունն անհրաժեշտ է այն մարդկանց, որոնք իրենց վրա զգում են ներկայի ծանրությունն ու զրկանքները և մտադիր են ձերբազատվելու դրանցից: Պատմական ընկալման այս ձևի առկայությունը Նիցշեն գնահատում է ոչ միայն որպես կյանքի վերափոխման անհրաժեշտ պայման, այլև մարդկային ուժի և թուլության արտահայտություն: Սովորաբար անցյալը «ջարդելու» հակումը դիտվում է զարգացման անհրաժեշտ պայման և այդ պատճառով գրեթե միշտ դրական գնահատականի է արժանացել: Եվ պատահական չէ, որ պատմական անհատականությունների հիմնական արժանիքներից մեկը համարվել է անցյալը «ջարդելու» կարողությունը: Բայց Նիցշեն քննադատական պատմության մեջ ևս տեսնում է վտանգավորություն: Ըստ նրա, անցյալի վերափոխումը վտանգավոր գործողություն է, քանի որ «մենք լինելով նախկին սերունդների ժառանգորդը, միաժամանակ նրանց մոլորությունների, կրքերի ու թերությունների, ինչպես նաև հանցանքների կրողն ենք, և անհնարին է կտրվել այդ շղթայից»: Կարծում ենք, Նիցշեի այս միտքը լավագույն բացատրությունն է հինը «ջարդելու» և նորը կառուցելու ճանապարհին գտնվող ժողովուրդների համար: Փաստորեն, եթե մոնումենտալ ու հնախույզ պատմական ընկալումները ներկան տարրալուծում են անցյալի մեջ, ապա քննադատական պատմության կրողները, իրենց մեջ անխուսափելիորեն կրելով անցյալը, ընդվզում են նրա դեմ: Գերմանացի մտածողն այն տեսակետն է հայտնում, որ պայքարելով իրենց դաստիարակության ու բնածին հմտությունների դեմ՝ մարդիկ փորձում են արմատախիլ անել իրենց «առաջին բնությունը» և a posteriori ստեղծել «երկրորդ բնությունը»: Սակայն այդ ցանկության իրականացումը դժվարությունների է բախվում, քանզի, ըստ Նիցշեի, մենք, երբեմն իմանալով լավագույնը, ի վիճակի չենք լինում իմացությունից անցնելու գործի: Այնուամենայնիվ, քննադատական պատմության մեջ Նիցշեն տեսնում է շափազանց էական ճանաչողական արդյունք: Քննադատական պատմության ծառայությունից օգտվող մարդիկ գիտակցում են, որ որոշ ժամանակ առաջ իրենց

առաջին բնությունը եղել է երկրորդ, և որ ցանկացած հաղթանակած երկրորդ բնություն ժամանակի ընթացքում դառնում է առաջին: Սա նշանակում է, որ Նիցշեն ընդունում է քննադատական պատմության պոզիտիվ դերը արժեքալին վերագնահատումների գործում: Մյուս կողմից քննադատական պատմությունը կարևոր է, քանզի մարդկանց մեջ ձգտում է առաջացնում դեպի նորը: Բայց ժամանակակից մարդը, գերմանացի մտածողի կարծիքով, կորցրել է նորի զգացումը և հաշտվում է «պատմական կրթվածության» հետ:

Պատմության ընկալման վերոնշյալ տեսակները միավորող հիմքն այն է, որ բոլորը ծառայում են կյանքին: Լինելով կյանքի փիլիսոփայության հիմնադիրներից մեկը՝ գերմանացի մտածողը պատմության ուսումնասիրության երեք եղանակները դիտարկում է օգտապաշտական տեսակյունից, այսինքն՝ կյանքին օգտակար կամ վնասակար լինելու առումով: Նիցշեն այս եղանակները դիտում է փոխկապակցված միասնության մեջ, քանի որ յուրաքանչյուր մարդ և ժողովուրդ հավասարապես կարիք ունի մոտմենտալ, հնախույզ և քննադատական պատմական իմացության: Բայց դա պետք է լինի ոչ թե զուտ հայեցողական իմացություն, այլ պետք է ենթարկվի կյանքի պահանջներին: Իրանով իսկ գերմանացի փիլիսոփան շփազանց հետաքրքիր հարցադրում է անում. կյանքի և ճանաչողության փոխհարաբերության հարցը: Նա առաջինն է խոսում գիտելիքի և կյանքի միջև առկա հակասության վտանգավորության մասին: Առաջ քաշելով կյանքի վճռորոշ լինելու դրույթը՝ Նիցշեն ընդգծում է, որ եթե ճանաչողությունը ոչնչացնում է կյանքը, ապա դրանով ոչնչացնում է նաև իրեն: Դեկարտի հանրահայտ cogito, ergo sum (մտածում եմ, հետևաբար գոյություն ունեմ) դրույթը Նիցշեն վերափոխում է vivo, ergo cogito (ապրում եմ, հետևաբար մտածում եմ նեմ) ձևով:

Տրիգրիխ Նիցշեի պատմափիլիսոփայական մյուս կարևորագույն հիմնախնդիրը կյանքի ու փիլիսոփայության փոխհարաբերության հարցն է: Ներկայացնելով պատմության ուսումնասիրության եղանակները՝ գերմանացի փիլիսոփան քննարկում է իր ժամանակի հիմնախնդիրները: Նիցշեի քաջածանոթ նիհիլիստական հայացքները դրսևորվում են նաև կյանքի ու պատմության փոխհարաբերության ոլորտում, որտեղ այլևս խախտված է բնական ներդաշնակությունը: Կյանքի ու պատմության միջև առկա խզումը նա բացատրում է պատմությունը գիտություն դարձնելու կործանարար հրամայականով, ինչի արդյունքում պատմությունը մեկուսանում է ռեալ կյանքից: Եվ դա, Նիցշեի համաձայն, բացասաբար է ազդում մարդու հոգեկան աշխարհի վրա: Հայտնվելով արտաքին ազդակների հեղեղի տակ՝ մարդը հակասության մեջ է մտնում իր ներքին էության հետ: Ընդ որում, արտաքին ազդակները, յուրացվող գիտելիքները շատ հաճախ կապ չունեն մարդու իրական պահանջմունքների հետ: Ուստի շտաանալով իր համար անհրաժեշտը՝ մարդը դառնում է քառասյին ներաշխարհի կրող: Նման իրավիճակի պատճառներից մեկը գերմանացի փիլիսոփան համարում է արտապատմական կյանքով ապրելու ժամանակակից մարդու անընդունակությունը: Այս տեսակետից Նիցշեն բարձր է գնահատում հին հույներին, որոնք կարողանում էին ապրել իրենց ներքին էությունը համապատասխան: Մինչդեռ մեր ժամանակներում «կրթվածություն» և «պատմական կրթվածություն» հասկացությունները նույնացվում են: Իսկ եթե հին հույներից մեկը պնդեր, թե հնարավոր է առանց «պատմական կրթվածության» «կրթված» մարդ համարվել, ապա ժամանակակից մարդիկ կզարմանային: Բայց, ըստ Նիցշեի, հին հույները իրենց զարգացման բարձր աստիճանում կարողացան պահպանել արտապատմականությունը:

Պատմության գիտականացման, պատմական գիտելիքների հոսքի ազդեցության տակ գտնվող հասարակությունում առկա է նաև ձևի ու բովանդակության աններդաշնակություն: Մանրաբեռնվելով այլ ժամանակաշրջանների բարձրի, արվեստների, փիլիսոփայական ուսմունքների ուսումնասիրությամբ, մարդիկ դառնում են «քայլող հանրագիտարաններ», և նրանց արժեքը միայն բովանդակության մեջ է: «Մենք բովանդակություն ունենք, մեզ չի բավարարում միայն ձևը»՝ ժամանակակից մարդու կարգախոսը Նիցշեն համարում է անթույլատրելի հակասություն: Նրա կարծիքով ժամանակակից հասարակարգը բաժանվում է երկու մասի՝ խեղաթյուրված ներաշխարհով կրթվածների և չհասկացող ներաշխարհով անկիրթների:

Չափազանց կարևոր է պատմության վնասների դասակարգման խնդիրը: Նիցշեն գտնում է, որ պատմության գերիշխումը մարդկանց գիտակցության մեջ ունի չորս վնասակար հետևանք: Առաջին, պատմականության հավելյալությունը ծնում է արտաքինի ու ներքինի հակադրություն, ինչը հանգեցնում է անձի թուլացմանը: Երկրորդ, մարդկանց մոտ պատրանք է ձևավորվում, թե հենց իրենց ժամանակաշրջանն է բացառիկ առաքինություններից մեկի՝ արդարության կրողը: Երրորդ, խախտվում են ժողովրդի բնազդները, կասեցվում է առաջընթացը: Չորրորդ, ժողովուրդը իր հանդեպ ծաղրով է լցվում, ինչը էգոիզմի ու ցինիզմի առաջացման պատճառ է դառնում: Հստ Նիցշեի, պատմության հավելյալությունը բացասական ազդեցություն է գործում ժամանակակից հասարակության և ժողովուրդների հոգևոր «առողջության» վրա: Իսկ վերջինս նրա համար շատ ավելի կարևոր է, քան մասնատված Գերմանիայի քաղաքական միասնության վերականգնումը: Ուստի նա գերմանացիների գերխնդիրն է համարում ոգու և կյանքի միասնությունը, որը պետք է հիմնվի ձևի ու բովանդակության, ներքին աշխարհի ու պայմանականության հակադրության վերացման վրա: Եթե Հեգելը չափազանց բարձր կարծիք ուներ գերմանացիների մասին և նրանց համարում էր համաշխարհային պատմությունը իր տրամաբանական վախճանին հասցնող ժողովուրդ, ապա Նիցշեն այլ կարծիքի է: Մասնավորապես նա նշում է, թե գերմանացիներն ապագա չունեն, և պատճառն այն է, որ նրանք չունեն այսօր: Կարևորելով գերմանացիների դերը պատմական գործընթացում՝ Նիցշեն ասում է, որ գերմանացիները դատապարտված են «ժառանգորդ» կամ կույր հետևորդ լինելու: Բայց այդ դերի խորը և լայն ընկալման պարագայում ինչպես առանձին անհատները, այնպես էլ ժողովուրդը կարող են մեծ առաքելություն իրականացնել: Դա հնարավոր է այն դեպքում, երբ գերմանացիները իրենց համարեն մեծ ներուժի կրող դասական աշխարհի արժանի ժառանգորդներ, այլ ոչ թե այդ սերունդի դժգույն մնացորդ: Այս տեսակետից Նիցշեն մեծ վտանգ է տեսնում Հեգելի փիլիսոփայական համակարգի մեջ, քանի որ այնտեղ ազդարարվում է համաշխարհային պատմության ավարտը, և հաջորդ սերունդները, փաստորեն, դառնում են պատմության մնացորդներ: Հեգելի մասին Նիցշեի նման խիստ վերաբերմունքը, բնականաբար, բխում է նրանց ուսմունքների կոնցեպտուալ տարբերություններից: Ի տարբերություն Հեգելի, Նիցշեն գերմանացիների պատմական ընթացքի մեջ ետընթաց է տեսնում, գտնելով, որ գերմանական մշակույթը չի հենվում կյանքի վրա, ինչի արդյունքում դաստիարակում է ոչ թե ազատատենչ մարդ, այլ գիտությանը նվիրված մարդ:

Մինչև Նիցշեն պատմափիլիսոփայության մեջ լայն տարածում ուներ այն տեսակետը, որ պատմությունը օբյեկտիվ երևույթ է: Իսկ Նիցշեն չի ընդունում պատմության օբյեկտիվ ընկալումը, դա համարելով պատասխանատվությունից խուսափելու եղանակ, ինչի արդյունքում մարդը կանգնում է

«օրբեկտիվ հայելի» դառնալու վտանգին հանդիման: Նա գտնում է, որ պատմությանը ճնշմանը կարող են դիմանալ միայն ուժեղ անհատականությունները: Այս խնդիրը Նիցշեի համար ունի սոցիալական կարևոր նշանակություն, քանի որ նրանք, ովքեր ընկրկում են պատմության ազդեցության առաջ, ի վերջո հանդուրժում են ցանկայած իշխանություն: Եթե Հեղելի համար պատմության նպատակը համաշխարհային Ոգու ինքնաճանաչումն է, ապա Նիցշեի գերխնդիրը պատմության գնահատումն է ու նրա հերմենևտիկան: Դա է պատճառը, որ Հեղելի մոտ պատմությունը վերանձնային երևույթ է, իսկ Նիցշեի պատմափիլիսոփայության կենտրոնում մարդու հիմնախնդիրն է: Արդյունքում առաջինը չի խոսում պատմության արժեքային-էթիկական ասպեկտի մասին, մինչդեռ երկրորդի համար դա առանցքային նշանակություն ունի: Կարևոր է նաև պատմական զարգացման բնույթի խնդիրը: Եթե Հեղելը պատմական իրադարձությունների մեջ օրինաչափ կապ է տեսնում, ապա Նիցշեն ուշադրություն չի դարձնում այդ խնդիրն և չի քննարկում պատմության նպատակաբանական ասպեկտը: Թեև գերմանացի երկու մտածողների պատմափիլիսոփայական հայացքները տարբեր են, բայց կարելի է մատնանշել նաև որոշակի նմանություններ: Նախ, թե՛ Հեղելը, և թե՛ Նիցշեն պատմության մեջ կարևորում են խոշոր անհատականությունների դերը: Զնայած պատմափիլիսոփայության մեջ Հեղելը հայտնի է իր և մարդու դերը անտեսող մտածող, բայց անժխտելի է, որ նա բացառություն է անում վառ անհատականություններին, որոնք առաջնային դեր են խաղում համաշխարհային Ոգու զարգացման գործընթացում: Մյուս հատկանշական նմանությունը վերաբերում է պատմության սուբյեկտների էլիտար ընկալմանը: Ու թեև պատմության սուբյեկտները նրանց համար տարբեր են, բայց մեթոդը նույնն է՝ պատմությունը կերտում են ընտրյալները: Եթե Հեղելի մոտ համաշխարհային պատմությունը մարմնավորվում է առանձին ժողովուրդների (չինացիներ, հույներ, գերմանացիներ և այլն) մեջ, ապա Նիցշեն պատմության կերտող է համարում առանձին անհատներին: Պատմության բացատրության հարցում Նիցշեի ելակետը անհատների կողմից ներկայի առանցքային խնդիրների գիտակցումն է, ինչը նրանցից պահանջում է սեփական ընդունակությունների լարում: Ըստ Նիցշեի, միայն վառ անհատականությունները կարող են տարբերակել անցյալի առաջնային ու երկրորդական խնդիրները: «Հավասարը ճանաչվում է հավասարի կողմից, այլապես դուք միշտ անցյալը կ'իջեցնեք ձեր մակարդակին»⁸, — գրում է Նիցշեն:

Ինչպես վերը նշեցինք, ըստ Նիցշեի պատմության հավելյալությունը ծրնում է արդարության կրողը լինելու պատրանք: Այս իմաստով հետաքրքիր են Նիցշեի դատողությունները պատմական արդարության վերաբերյալ: Ըստ էության դերմանացի փիլիսոփան այդ խնդիրը հարաբերում է օրբեկտիվության հետ: Պատմության օրբեկտիվ մեկնաբանության արդյունքը որոշակի օրինաչափությունների «ցանցի» ստեղծումն է ու պատմական ընթացքի նրկատմամբ կրավորական դիրքորոշումը: «Օրբեկտիվության և արդարության միջև ընդհանուր ոչինչ չկա», — ասում է Նիցշեն: Պատմական արդարության հիմնահարցը սովորաբար համարվել է քաղաքական խնդիր, որը բացասաբար է անդրադառնում միջպետական հարաբերությունների վրա: Նիցշեն կարևոր նորույթ է կիրառում՝ պատմական արդարությունը քննելով պատմափիլիսոփայության հարթության վրա: Ինչպես պատմափիլիսոփայական մյուս հարցերում, այնպես և պատմական արդարության խնդրում Նիցշեն, կոնկրետ ու պրակտիկ մոտեցում է ցուցաբերում: Ընդհանուր առմամբ տիրապետող էր

⁸ Տե՛ս կույն տեղը, էջ 198:

այն կարծիքը, որ պատմական արդարությունը բարոյական խնդիր է: Սակայն գերմանացի փիլիսոփայի համար դա «սարսափելի առաքինություն է», որը մշտապես ոչնչացնում է կենսականը: Եվ եթե փորձենք փնտրել պատերազմների, հակամարտությունների պատճառները, ապա կտեսնենք, որ դրանց մեծ մասն առաջացել է պատմական արդարությունը վերականգնելու համար: Բայց Նիցշեի համար կարևոր է ոչ թե ազգային ու քաղաքական խնդիրների լուծումը, այլ դրանց ազդեցությունը պատմության վրա: Պատմական արդարության խնդրի համատեքստում նա անհրաժեշտ է գտնում պատմության ու բարոյականության համեմատության հարցի քննումը: Պատմության մեջ բարոյականության փնտրտուքը (պատմական արդարության վերականգնումն նպատակով) շատ հաճախ մտածողներին փակուղու առջև է կանգնեցրել: Նիցշեն այդ փակուղուց խուսափում է պատմությունը բարոյականությունից սահմանազատելու ճանապարհով: «Պատմությունը միշտ հավաստել է՝ «այսպես եղել է», իսկ բարոյականությունը՝ «դուք չպետք է...»⁹, — նշում է Նիցշեն:

Պատմափիլիսոփայության հիմնահարցերից մեկը միշտ եղել ու մնում է պատմության օգտակարության խնդիրը, որին անդրադառնում է նաև Նիցշեն: Նրա կարծիքով պատմությունը կարող է օգտակար լինել միայն այն դեպքում, երբ մարդը «սովորի ապրել»: Պրակտիցիզմի կողմնակից գերմանացի մտածողի համար վատթարագույն փոփոխությունը ավելի նախընտրելի է, քան անհուսալի ներկան, քանզի առաջինը զարգացման սաղմ է պարունակում, իսկ երկրորդը հանգեցնում է հասարակության լճացման: Պրակտիցիզմը բխում է այն իրողությունից, որ Նիցշեն պատմական ճանաչողության հարցում ելակետ է ընդունում սուբյեկտին, ինչը, բնականաբար, ենթադրում է սուբյեկտի ակտիվություն: Կյանքի վերափոխման ցանկությունը նրա մոտ այնքան էական է, որ վերջում բացահայտ հակասության մեջ է ընկնում: Եթե աշխատության սկզբում քննադատական պատմության մասին խոսելիս Նիցշեն նշում է, թե մենք նախկին սերունդների մոլորությունների, հանցանքների կրողն ենք և չենք կարող կտրվել այդ շղթայից, ապա վերջում նա առաջարկում է ընդվզել անցյալի դեմ և դաստիարակել նոր արժեքների կրող, «մարտնչող առաջին սերունդ»:

Ամփոփելով նշենք, որ Նիցշեն մեծ ավանդ ունի պատմափիլիսոփայության ետհեգելյան փուլի ձևավորման գործում: Նա պատմափիլիսոփայության այն փուլի սկզբնավորողն է, որի առավել հայտնի ներկայացուցիչներ են Օսվալդ Շպենգլերը, Առնոլդ Թոյնբին և Կարլ Յասպերսը: Շպենգլերը իրավացիորեն նշում է, որ փիլիսոփայությունը կարելի է երկու խմբի բաժանել՝ ձևավորվող և ձևավորված: Ըստ էության նոր պատմափիլիսոփայության մեջ Նիցշեն առաջին խմբին է պատկանում: Ժամանակի հասարակական վերափոխումների մթնոլորտում պատմության վերաիմաստավորման խնդիրը հրատապ կարևորություն ուներ, քանզի պատմափիլիսոփայության լավատեսական ընկալումը պարարտ հող էր ստեղծում լճացման համար: Այս իմաստով Նիցշեի հարցադրումները էապես նպաստեցին պատմափիլիսոփայական հիմնախնդիրների նոր համակարգի ձևավորմանը: Արտապատմական աշխարհընկալումը, պատմականի գերիշխանության հաղթահարումը, պատմության միֆականացման ու ֆետիշացման վտանգը, պատմական գործընթացի հարաբերումը մարդու գիտակցության էվոլյուցիային՝ սրանք են այն հիմնական փրկիչները, որոնք առաջադրվել են Նիցշեի կողմից ու կանխորոշել նոր պատմափիլիսոփայության զուգակցությունը:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 211:

С. О. ХАЧАТРЯН-- Историко-философские взгляды Ф. Ницше.— В статье рассматриваются историко-философские взгляды немецкого философа XIX века Фридриха Ницше. Несмотря на то обстоятельство, что Ницше один из знаменитых философов века, философия истории немецкого мыслителя мало изучена. Однако немецкий философ один из основателей нового историко-философского направления, нитью которого является констатация духовного кризиса человечества.

Историко-философские взгляды Ницше в основном изложены в сочинении «О пользе и вреде истории для жизни». В статье особое внимание уделяется анализу трех видов сущения—исторического, неисторического, надисторического, а также историко-монументального, антикварного и критического. Сравниваются историко-философские концепции Ницше и Гегеля. Если Гегель считает, что исторический процесс достиг своей цели—самопознания мирового духа, то согласно Ницше, история должна служить жизни и избыток исторического чувства имеет отрицательное влияние на развитие человечества.